Հովհաննես Թումանյան

Խորհրդածություն

Ո՞րն է դրախտը, վայրն երանավետ,
Ուր պիտի ապրեմ գերեզմանից ետ.
Մի՞թե մարդկային տառապած կյանքը
Չըստեղծեց այն սուտ մխիթարանքը.

Եվ մի՞թե նորա մահից սարսափած
Ագահությունը չէ իրան խաբած...
Սակայն բարի է. մի տանջված արդար,
Կամ իրան արդար համարող մի չար
Երկրային կյանքի վերջին վայրկյանին

Հանգիստ ու խաղաղ կավանդե հոգին,
Համաձայն իրան ճաշակի, կամքի,
Վայելքն հիշելով խոստացյալ կյանքի.
Եվ ահա միակ, բայց մեծ օգուտը,
Որ մարդկությանը տվեց այս սուտը:

Ա՞յս է մեր կյանքը. լոկ խաբեություն.
Ոհ, մի՞թե և ես, ինչպես մի հնչյուն,
Այս իմ հույսերիս, ձգտումներիս հետ
Պիտի մեռանիմ, չքանամ անհետ...
Չէ՛, սիրելի է խոստումն երկնքի

Հույսն հավերժական, անվախճան կյանքի.
Հեռո՛ւ ինձանից հոգեմաշ կասկած,
Ողջույն քեզ, ողջո՛ւյն, ո՛վ կյանքի աստված.
Արի՛, հայտնվի՛ր, նշկահիր մահու
Տարակուսանաց տագնապն ահարկու

Կույր հավատով զորացրու հոգիս
Անմահություն տուր լքացած կյանքիս...
Բայց ի՞նչպես պիտի կյանք առնեմ կրկին,
Արդյոք լուսակազմ, աննյութ, անմարմին
Պիտի սավառնեմ անծայր եթերքում,

Թե՞ իբրև մի հունչ շրջեմ աշխարքում,
Թե՞ անփույթ, անգործ թափառեմ պիտի
Մարդոց աչքերին անտեսանելի,
Թե՞ ամպերի մեջ պիտի ես հանգչեմ
Եվ ոտքիս տակից կայծակներ իջնեն...

Օ՛, ներիր, աստված՝ ծածկագետ, անհուն,
Ներիր մեծամիտ, զոռոզ պատանուն.
Աննշան ճճիս չարաչար մեղա,
Հանդուգն խորհրդով խորամուխ եղա,
Ձգտեցի պարզել քո աստվածային

Անհասանելի, անմեկին գաղտնին:

1890